Հավելված
ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2025թ. Հունվարի 30-ի թիվ 7-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025

I. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....2
II. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ.....3-4
III. ԱՄՓՈՓԱԳԻՐ.....5
IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....6
V. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ..7-8
VI. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 9-14
VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 15-27
VIII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 28

II. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը[1]	Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 102-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն:
Հաշվեքննության առարկան	2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշում և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2024 նոյեմբերի 4-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը[2]	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական,

[1] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:*

[2] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների և* ուղեցույցների *վրա:*

համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանության համաձայն:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Հակոբ Միհրանյանը:

III. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) մի շարք ծրագրային միջոցառումների գծով դրամական հոսքերի իրականացման համապատասխան գանձապետական հաշիվներում պետական բյուջեից կատարվող հատկացումներից զատ մուտքագրվում են նաև տվյալ ծրագրային միջոցառմանը չդասվող ծախսերի գծով հետ վերադարձված գումարները: Արդյունքում, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությամբ արտացոլված և ծրագրային միջոցառումների իրականացման գանձապետական հաշիվներով, նույն ժամանակաշրջանի, դրամական հոսքերի ցուցանիշների միջև առկա են շեղումներ (մանրամասն ներկայացված է «IV. Այլ փաստեր» բաժնում):

Ծառայությունում 2023 թվականի պետական բյուջեի տարեկան, 2024 թվականի պետական բյուջեի երեք և վեց ամիսների կատարման հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություններով արձանագրված անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների և ներկայացված առաջարկությունների մանրամասն նկարագրությունը ներկայացված է «VII.Հետհսկողական գործընթաց» բաժնում:

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ[3]

Հաշվեքննության ընթացքում Ծառայությունից հայցվել և ստացվել է անհրաժեշտ տեղեկատվությունը: Այդուհանդերձ, հաշվի առնելով ներկայացված տեղեկատվության ծավալի մեծությունը և հաշվեքննություն իրականացնելու ժամկետի սղությունը, Ծառայության կողմից իրականացվող միջոցառումների շրջանակում կատարվող ծախսերի հաշվեքննությունը, ստորև ներկայացվող առանձին հարցերի պարզաբանման հետ միասին, նախատեսվում է իրականացնել առաջիկա հաշվեքննության ընթացքում:

[3] *Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնու՞մ է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:*

V. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների պլանով նախատեսվել է 441,705,813.10 հազ. դրամի ծախս, ճշտված պլանը կազմել է 476,156,896.51 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 440,228,468.41 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 439,819,278.95 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 440,171,029.97 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 92.36%, ըստ ծրագրերի ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Ծառայության 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների ցուցանիշները

(հազ. դրամ)

Ծրագիր		Հաշվետու ժամանակահատվածի պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
Ընդամենը		441,705,813.10	476,156,896.51	439,819,278.95	440,171,029.97
1005	Պարգևավճարներ և պատվովճարներ	8,771,500.00	8,771,500.00	8,181,318.61	8,181,174.61
1011	Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	23,808,149.40	21,800,608.80	18,065,784.13	18,052,921.22
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	-	61,080.00	61,076.62	69,098.62
1068	Ժողովրդագրական վիճակի բարելավում	52,576,715.00	50,932,171.00	47,145,326.54	47,145,501.72
1082	Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	17,078,494.70	16,998,494.70	16,911,449.58	16,914,569.58
1088	Զբաղվածության ծրագիր	399,187.60	1,433,801.30	880,792.73	881,792.73
1098	Բնակարանային ապահովում	2,451,250.00	4,001,250.00	3,996,252.29	3,996,252.29
1102	Կենսաթոշակային ապահովություն	266,418,900.00	266,368,900.0	253,142,559.52	253,185,094.07
1117	Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	4,909,838.40	4,914,078.31	4,811,219.14	5,121,892.66

	Ծրագիր	Հաշվետու ժամանակա հատվածի պլան	Հաշվետու ժամանակա հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
1141	Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն	-	105,136.70	63,178.70	63,178.70
1160	Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	100.00	113,386.60	18,115.05	18,115.05
1168	Արվեստների ծրագիր	24,727.50	24,727.50	21,465.64	21,471.51
1184	Ավանդների և այլ փոխհատուցումներ	1,136,250.00	1,136,250.00	737,288.84	737,319.07
1205	Սոցիալական ապահովություն	49,130,700.50	49,721,061.60	45,519,851.06	45,519,047.64
1225	Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	15,000,000.00	49,774,450.00	40,263,600.50	40,263,600.50

VI. ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

6.1 Հաշվեքննությամբ պարզվել է, որ չեն պահպանվել ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 254-Ն[4] հրամանով հաստատված <<Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին>> հաշվետվության (օրինակելի ձև Հ-2) լրացման պահանջների 8-րդ կետով սահմանված՝ բյուջետային հաշվետվություններին ներկայացվող պահանջները, համաձայն որի «....ծրագրի պատասխանատու մարմնի գանձապետական հաշվից ելքագրված գումարները համարվում են տվյալ միջոցառումների գծով ֆինանսավորում և դրամարկղային ծախսեր»:

Ծառայության հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությամբ արտացոլված և ծրագրային միջոցառումների իրականացման նպատակով բացված գանձապետական հաշիվների շարժի ցուցանիշների միջև առկա են հետևյալ շեղումները (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Ծառայության՝ ըստ ծրագրային միջոցառումների հաշվետու ժամանակաշրջանի դրամարկղային ծախսի և գանձապետական հաշվից ելքագրված գումարների շեղումները

(հազ. դրամ)

Միջոցառում		**Հաշվետվությամբ 30/09/2024թ. դրությամբ արտացոլված դրամարկղային ծախսը**	**Գանձապետական հաշվի 30/09/2024թ. դրությամբ ելքագրված գումարները**	**Շեղումը**
ԸՆԴԱՄԵՆԸ				
1011-12001	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ	17,972,040.9	18,304,849.00	332,808.1
1068-12001	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրում	19,368,547.84	19,395,489.35	

[4] <<Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման, ամփոփման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի մարտի 28-ի N 324-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին>>

				26,941.51
1068-12002	Երեխայի ծննդյան միանվագ նպաստ	14,990,989.80	15,000,150.00	9,160.2
1068-12004	Դրամական աջակցություն ընտանիքում 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին	12,785,341.81	12,801,706,81	16,365.0
1082-12002	Մայրության նպաստ	12,493,480.07	12,525,670.87	32,190.6
1102-12001	Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	33,367,442.45	33,388,520.67	21,078.22
1102-12003	Աշխատանքային կենսաթոշակներ	216,135,782.09	216,413,049.27	277,267.18
1205-12001	Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ	35,061,579.93	35,108,969.26	47,389.33
1225-12018	Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցություն	37,921,500.50	37,975,290.0	53,789.5
Ընդամենը		400,096,705.39	400,913,695.23	816,989.84

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

«1) Աղյուսակ 2-ում ներառված, ըստ ծրագրային միջոցառումների հաշվետու ժամանակաշրջանում դրամարկղային ծախսերի և գանձապետական հաշիվներից ելքագրված գումարների շեղումների վերաբերյալ.

Խնդրո առարկա աղյուսակի՝ շեղումներ սյունակում գոյացած գումարների հաշվարկի մեջ հաշվի չեն առնվել նույն ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանված կարգով ծրագրի գծով առաջացած ավել վճարված գումարների (Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված գումարների) վերադարձի հնարավությունը (փաստը, գումարները): Ըստ այդմ, 816989.84 հազ. դրամը հետ վերադարձված գումար է, ինչը չի կարող դիտարկվել որպես հաշվետու ժամանակահատվածի ֆինսական շարժի հանրագումարի շեղում: Միաժամանակ, նման շեղումների դեպքում լիազոր մարմնի՝ Ֆինանսների նախարարության կողմից ֆինանսական հաշվետվությունները չէին ընդունվի:

2) Հաշվետու ժամանակաշրջանում վերադարձված գումարների մասով ծրագիրը ինքնաշխատ կատարում է համապատասխան նվազեցումներ փաստացի ելքագրված գումարներից, որի արդյունքում առաջանում է դրամարկղային ծախսը (կցվում է 1011-12001 միջոցառման հաշվետու ժամանակաշրջանի գանձապետական

հաշվի քաղվածքը, ինչպես նաև որպես օրինակ՝ մեկ օրվա՝ տվյալ դեպքում 29.01.2024թ-ի կրեդիտային և դեբետային շրջանառության քաղվածքը, որտեղ երևում է ինքնաշ[ատ եղանակով վերադարձված գումարների նվազեցումը և արդյունքում ստացված դրամարկղային ծախսը):

Օրինակ՝ տվյալ օրվա կրեդիտային մասի շրջանառությունը կազմում է 2224060000 ՀՀ դրամ,որից ետ վերադարձը- 60000 դրամ, իսկ դեբետային շրջանառությունը կազմել է 303095500 ՀՀ դրամ,քանի որ վերադարձ գումարները վերաբերվում են նույն ժամանակաշրջանին, ապա ծրագիրը ավտոմատ կերպով կատարել է 60000 դրամի նվազեվում և արդյունքում դրամարկղային ծախսը կազմել է 303035500 դրամ:Նույն սկզբմունքով կատարվել է հաշվետու ժամանակաշրջանի դրամարկղային ծախսերի ստացումը:

3) «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության)՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, որի համաձայն գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են: Ըստ այդմ, ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Միասնական սոցիալական ծառայությունը կիրառում է նշված օրենքով սահմանված՝ հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը:

4) Հաշվեքննության օբյեկտի հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանի՝ 2024 թվականի 9 ամիսների ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ՀՀ Ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափերին համապատասխան՝ LS FINANS հաշվետվության էլեկտրոնային համակարգով»:

Հաշվեքննողի մեկնաբանությունը.

Ծառայության բացատրությունը չի բխում բյուջեի կատարման վերը նշված հաշվետվության լրացման պահանջներից, քանի որ, ինչպես նկարագրված է սույն ընթացիկ եզրակացության 6.4 կետում, տվյալ շեղումներն առաջանում են պետության սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով արտահոսքերի, պարտքերի և ծախսերի հաշվապահական հաշվառում չվարելու հետևանքով: Ըստ այդմ, արձանագրված շեղումները հնարավոր է վերացնել միայն այդ հաշվառումը վարելու դեպքում: Ինչ վերաբերվում է հաշվետու ժամանակաշրջանի բյուջեի կատարման հաշվետվությամբ, աղյուսակ 2-ում նշված ծրագրային միջոցառումների

գծով արտացոլված դրամարկղային ծախսերի ցուցանիշներին, ապա՝ այո, Ծառայության բացատրությամբ ներկայացված գործողությունների՝ «...ինքնաշխատ եղանակով» վերադարձված գումարները նվազեցնելու արդյունքում, արձանագրված շեղումները չեն հանգեցրել դրամարկղային ծախսի հաշվետվական ցուցանիշների խեղաթյուրման (սույն ընթացիկ եզրակացությունում չկան «Անհամապատասխանություններ» և «Խեղաթյուրումներ» բաժիններ):

6.2 Մի շարք ծրագրային միջոցառումների գծով դրամական հոսքերի իրականացման համապատասխան գանձապետական հաշիվներում պետական բյուջեից կատարվող հատկացումներից զատ մուտքագրվում են նաև տվյալ ծրագրային միջոցառմանը չդասվող ծախսերի գծով հետ վերադարձված գումարները. օրինակ.

- 1102-12003 «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրային միջոցառման դրամական հոսքերի ընդհանրացման նպատակով բացված գանձապետական՝ 900011556553 հաշվում, հաշվեքնությամբ ընդգրկված ժամանակաշրջանում, 8 դեպքում մուտքագրվել է սոցիալական օգնության նպաստներին դասվող՝ 527.1 հազ. դրամի չափով հետ վերադարձված գումարները.
- 1011-12001 «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրային միջոցառման՝ 900011010874 գանձապետական հաշվում, հաշվեքնությամբ ընդգրկված ժամանակաշրջանում, 83 դեպքում՝ մուտքագրվել է «12 ամիս եւ ավելին չվճարված կենսաթոշակի» գծով հետ վերադարձված՝ 2063.5 հազ. դրամի չափով գումարները:
- 1068-12002 «Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» ծրագրային միջոցառման՝ 900011474245 գանձապետական հաշվում, հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակաշրջանում, 7 դեպքում մուտքագրվել է «...սխալ կամ 12 ամիս եւ ավելին չվճարված կենսաթոշակի» գծով հետ վերադարձված՝ 1,635.4 հազ. դրամի չափով գումարները և այլն: Համանման դեպքեր առկա են նաև մյուս ծրագրային միջոցառումների գանձապետական հաշիվների մուտքերում:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

«....նշված գանձապետական հաշիվներին տարբեր միջոցառումների և ծրագրերի գծով փաստացի մուտք եղած գումարները, գանձապետական հաշիվների քաղվածքներում արտացոլվել են բանկերի կողմից ձևավորված գործարքների արդյունքում: Ծառայությունը չունի նշված գործառույթների նկատմամբ հսկողական մեխանիզմներ՝ վճարողի (վճարումն ապահովողի) տեխնիկական սխալները ուղղելու համար: Այստեղ կարևորվում է, որ գումարները մուտքագրվել են պետական բյուջեի գանձապետական հաշիվներին»:

Հաշվեքննողի մեկնաբանությունը.

Ինչպես վերը նշվեց, բյուջեի կատարման հաշվետվությունների լրացման պահանջները հնարավոր է ապահովել միայն բյուջեով նախատեսվող բոլոր ծրագրային միջոցառումների գծով դրամական հոսքերի, պարտավորությունների և ծախսերի հաշվապահական հաշվառում վարելու դեպքում:

6.3 Ծառայության հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությամբ (Ձև 4) 1011-12001 «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրային միջոցառման գծով դեբիտորական պարտքը, 01.01.2024 թվականի դրությամբ արտացոլվել է 3,342.5 հազ. դրամի չափով, իսկ 30.09.2024 թվականի դրությամբ՝ 16,570.6 հազ. դրամի չափով:

Ծառայության տարածքային կենտրոնների հաշվետու տարվա 9 ամիսների հաշվետվությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ 01.01.2024 թվականի դրությամբ այդ պարտքերի չափը կազմում է 53,442.54 հազ. դրամ, իսկ 30.09.2024 թվականի դրությամբ՝ 62,612.94 հազ. դրամ:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Միասնական սոցիալական ծառայություն դեբիտորական պարտքերի հաշվառումն ամբողջ ծավալով մեկնարկել է 2024 թվականի օգոստոսի 16-ի ներքին/ՆԱ/78973-2024 հանձնարարականի շրջանակներում՝ առկա շեղումների վերաբերյալ ճշտված տեղեկատվությունը կներառվի 2024 թվականի տարեկան ֆինանսկան հաշվետվություններով»:

Հաշվեքննողի մեկնաբանությունը.

Խնդիրը կայանում է նրանում, որ «Միասնական սոցիալական ծառայություն դեբիտորական պարտքերի հաշվառումն ամբողջ ծավալով...» հնարավոր է ապահովել բացառապես Ծառայության ակտիվների, պարտավորությունների, զուտ ակտիվների վիճակի ու շարժի, ինչպես նաև հասույթների և ծախսերի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, բոլոր գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման գրանցման և ընդհանրացման համակարգի առկայության դեպքում և դրա միջոցով (հիմք՝ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված):

6.4 Հարկ է նշել, որ արձանագրված վերոգրյալ շեղումներն ու անհամապատասխանությունները Ծառայության կողմից վերահսկվող՝ պետության սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով արտահոսքերի, պարտքերի և

ծախսերի հաշվապահական հաշվառում չվարելու հետևանքային դրսևորում են (մանրամասն նկարագրված է Ծառայության 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ. (https://armsai.am/hy/current-conclusions):

VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ծառայությունում 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ արձանագրված 9 անհամապատասխանություններից 5-ը դեռևս վերացված չեն, իսկ ներկայացված 5 առաջարկությունները գտնվում են կատարման ընթացքում:

Տեղեկատվություն նախորդ ընթացիկ եզրակացություններում Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ.

հ/հ	Առաջարկություն	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
	Միջոցներ ձեռնարկել կենսաթոշակի իրավունք ունեցող անձի աշխատանքային ստաժի մասին տեղեկատվությունը ինքնաշխատ եղանակով ճշտելու հետ կապված իրավակարգավորումները և դրանց կիրառման գործելակերպը ներդաշնակեցնելու ուղղությամբ:	Ընդունելի է	Ընթացքում է	Ծառայությունը խնդրո առարկա հարցը կանոնակարգելու նպատակով սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնին՝ Նախարարությանը՝ սահմանված կարգով շրջանառելու նպատակով ներկայացրել է ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Նախարարությունը թ. Ն ԴԽ/ԱԳ-1-3/18876-տեղեկացրել է, որ Ծառայության կողմից ներկայացված նախագծերով նախատեսվող կարգավորումները կքննարկվեն առաջիկայում նախարարության կողմից նախաձեռնվելիք օրենսդրական նախաձեռնությունների շրջանակներում:
	Միջոցներ ձեռնարկել բանկերի հետ գործող «Սոցիալական ապահովության հաշվի» պայմանագրերի շրջանակում ՀՀ	Ընդունելի է	Ընթացքում է	Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունն ընդունվել է ի գիտություն:

h/h	Առաջարկություն	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
	պետական բյուջե վերադրածման ենթակա միջոցների՝ սահմանված ժամկետները չպահպանելու ռիսկերը կառավարելու ուղղությամբ:			Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկերի հետ կնքվող սոցիալական ապահովության հաշվի պարբերական դրամական վճարների մասին) պայմանագրի օրինակելի ձևը հաստատված է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ Ծառայությունը Հաշվեքննիչ պալատի առաջարկությունը ներկայացրել է Նախարարությանը՝ Հաշվեքննիչ պալատի նշված դիտարկման և առաջարկության հաշվառմամբ սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտության և/կամ նպատակահարմարության հարցի վերաբերյալ սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնի դիրքորոշումը պարզելու նպատակով:
	Նախաձեռնել փոփոխություններ ՀՀ կառավարության 12.03.202թ N նախատեսելով «ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա ՀՀ օրենսդրության խախտմամբ դրամական վճարների գումարների և շահառուների տվյալների, որոնք լիազոր մարմինը տրամադրում է բանկերին» Ձև N 3–ը և «ՀՀ օրենսդրության խախտմամբ վճարված և հաշվետու ամսում ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա միանվագ դրամական	Ընդունելի է	Ընթացքում է	Ծառայության կողմից համապատասխան գրություն է ուղվել ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N որոշումներով սահմանված սոցիալական ապահովության հաշվի և միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրերին միացած բանկերին՝ նշված պայմանագրերով սահմանված

հ/հ	Առաջարկություն	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
	վճարների տվյալների, որոնք լիազոր մարմինը տրամադրում է բանկին» Ձև N 4-ը բանկերին ներկայացնել շահառուներին ՀՀ օրենսդրության խախտմամբ հանգամանքը ի հայտ գալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ:			պարտականությունները նախատեսված ժամկետում կատարելու և շահառուների բանկային հաշիվներում առկա միջոցները պահանջի հիման վրա պետական բյուջե հետգանձելու ժամկետների ուշացման դեպքերը բացառելու վերաբերյալ: Ծառայության կողմից համապատասխան գրություն է ներկայացվել Նախարարությանը՝ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N որոշումներով համապատասխանաբար հաստատված սոցիալական ապահովության հաշվի և միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրերի օրինակելի ձևերում բանկերի կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կամ ուշացմամբ կատարման դեպքերի համար պատասխանատվության միջոցներ սահմանելու նպատակով համապատասխան օրենսդրական փոփոխություններ և(կամ) լրացումներ կատարելու հնարավորության հարցը դիտարկելու նպատակով: Նախարարությունը նպատակահարմար չի համարել տվյալ պահին ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N որոշումներում փոփոխություններ կատարելու

հ/հ	Առաջարկություն	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
				նախաձեռնությամբ հանդես գալ, իսկ խնդրո առարկա հարցով դիմել է Կենտրոնական բանկ և Հայաստանի բանկերի միություն: Կենտրոնական բանկը հայտնել է, որ բարձրացրած խնդիրները ներկայացվել են ՀՀ գործող բանկերին՝ խնդիրների վերացման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու առաջարկությամբ:
	Մշակել գործիքակազմ բանկի պատասխանատվության ժամանակահատվածում՝ լիազոր մարմնից «ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա ՀՀ օրենսդրության խախտմամբ դրամական վճարների գումարների և շահառուների տվյալների, որոնք լիազոր մարմինը տրամադրում է բանկերին» Ձև N 3–ով և «ՀՀ օրենսդրության խախտմամբ վճարված և հաշվետու ամսում ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա միանվագ դրամական վճարների տվյալների, որոնք լիազոր մարմինը տրամադրում է բանկին» Ձև N 4–ով կարգադրությունը (պահանջը) ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում և դրանից հետո հաճախորդի հիման վրա բանկային հաշվից գումարների դուրսգրվելը վերահսկելու համար:	Ընդունելի է	Ընթացքում է	Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունն ընդունվել է ի գիտություն: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկերի հետ կնքվող սոցիալական ապահովության հաշվի վճարների մասին) պայմանագրի օրինակելի ձևը հաստատված է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ Ծառայությունը Հաշվեքննիչ պալատի առաջարկությունը ներկայացրել է Նախարարությանը՝ Հաշվեքննիչ պալատի նշված դիտարկման և առաջարկության հաշվառմամբ սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևում համապատասխան փոփոխություններ կատարելու

հ/հ	Առաջարկություն	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
				անհրաժեշտության և/կամ նպատակահարմարության հարցի վերաբերյալ սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնի դիրքորոշումը պարզելու նպատակով:
	Ապահովել՝ Միասնական սոցիալական ծառայության կողմից վերահսկվող՝ սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով դրամական հոսքերի, ծախսերի և պարտավորությունների հաշվապահական հաշվառումը ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան:	Ընդունելի է	Ընթացքում է	Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված Եզրակացության հիման վրա Ծառայության կողմից իրականացվել են Եզրակացությամբ արձանագրված և չհաշվառված դեբիտորական պարտքերի՝ սահմանված կարգով հաշվառումը: Միաժամանակ, հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի առաջարկությունը, Ծառայությունում ձեռնարկվում են համապատասխան միջոցներ դեբիտորական պարտքերի հայտնաբերման և հաշվառման մեթոդաբանությունը վերանայելու ուղղությամբ:
6	Հաշվեքննիչ պալատի կողմից բարձրացված ռիսկերը գնահատելու և դրանցով պայմանավորված՝ կենսաթոշակի ավել վճարման դեպքերը բացառելու նպատակով. • առանձնացնել առավել ռիսկային ժամանակահատվածներին վերաբերելի՝ շտեմարանում առկա աշխատանքային կենսաթոշակների տվյալները, • առաջնորդվելով էականության սկզբունքով՝ կիրառել տվյալների վերլուծության գործիքակազմ և առանձնացնել այն կազմակերպությունները		Ընթացքում է	Կենսաթոշակի ավել վճարման դեպքերը բացառելու նպատակով աշխատանքային կենսաթոշակ ստացող շահառուների աշխատանքային ստաժները Ծառայության կողմից իրականացվող կանոնադրական պարտավորությունների շրջանակում պարբերաբար ուսումնասիրվում, վերլուծվում, ինչպես նաև համադրվում են ապահովադիրների հաշվառման գրանցամատյանների և

h/h	Առաջարկություն	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
	նշված ժամանակահատվածներում աշխատել են առավել մեծ թվով կենսաթոշակառուներ, • առանձնացված կազմակերպություններից ստացված տվյալների և փաստաթղթերի հավաստիությունը պարզելու նպատակով իրականացնել համադրումներ և անհատական ուսումնասիրություններ՝ սահմանելով կատարման ժամանակացույց:			էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններում առկա այլ տեղեկատվության հետ: Համադրման արդյունքներով ըստ անհրաժեշտության գործատուների արխիվային փաստաթղթերում իրականացվում են ստաժները հաստատող փաստաթղթերի արժանահավատության ուսումնասիրություն (այդ թվում Հաշվեքննիչ պալատի կողմից նշված՝ «Ռիսկային» դիտարկվող ժամանակահատվածները): Հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի առաջարկությունը՝ Ծառայության կողմից այդ ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար առաջիկայում կսահմանվի միջոցառումների ծրագիր:

Բացի վերը նշված առաջարկություններից, Հաշվեքննիչ պալատի կողմից Ծառայությունում 2023 թվականի պետական բյուջեի տարեկան, 2024 թվականի պետական բյուջեի երեք և վեց ամիսների կատարման հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություններով, Ծառայությանը առաջարկվել է՝ Ընթացիկ եզրակացություններում ներկայացված առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը: Սակայն Ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն, Ծառայության կողմից այդ ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար միջոցառումների ծրագիրը կսահմանվի առաջիկայում:

Տեղեկատվություն նախորդ ընթացիկ եզրակացություններում Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերացման վերաբերյալ

հ/հ	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
	Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի «Լիազորված պետական մարմին ճանաչելու, սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևը, սոցիալական ապահովության հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալների ցանկը և սոցիալական ապահովության հաշվին մուտքագրելու միջոցով վճարվող գումարները սահմանելու մասին» N 284-Ն որոշմամբ սահմանված «Սոցիալական ապահովության հաշվի» պայմանագրի հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ ՀՀ պետական բյուջե հետգանձման սահմանված ժամկետի և բանկերի կողմից շահառուների բանկային հաշվից պետական բյուջե գումարների վճարման ժամկետների միջև:	Ընթացքում է	Բանկերի հետ կնքվող սոցիալական ապահովության հաշվի և միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրերը հաստատված են համապատասխանաբար ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի բանկերի կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կամ ուշացմամբ կատարման դեպքերի համար պատասխանատվության միջոցներ սահմանելու նպատակով ՀՀ կառավարության որոշումներում համապատասխան փոփոխություններ կատարելու գործառույթը դուրս է Ծառայության իրավասությունների շրջանակից: Միաժամանակ, հաշվեքննիչ պալատի առաջարկության հիման վրա Ծառայությունն իր իրավասությունների շրջանակներում ձեռնարկել է համապատասխան միջոցառումներ, մասնավորապես. Ծառայության կողմից համապատասխան գրություն է ուղվել ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն և N 287-Ն որոշումներով սահմանված սոցիալական ապահովության հաշվի և միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրերին միացած բանկերին՝ նշված

h/h	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
			պայմանագրերով սահմանված պարտականությունները նախատեսված ժամկետում կատարելու և շահառուների բանկային հաշիվներում առկա միջոցները պահանջի հիման վրա պետական բյուջե հետգանձելու ժամկետների ուշացման դեպքերը բացառելու վերաբերյալ: Ծառայության կողմից համապատասխան գրություն է ներկայացվել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարութանը (այսուհետ՝ Նախարարություն), որպես սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնին՝ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն և N 287-Ն որոշումներով համապատասխանաբար հաստատված սոցիալական ապահովության հաշվի և միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրերի օրինակելի ձևերում բանկերի կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կամ ուշացմամբ կատարման դեպքերի համար պատասխանատվության միջոցներ սահմանելու նպատակով համապատասխան օրենսդրական փոփոխություններ և(կամ) լրացումներ կատարելու հնարավորության հարցը դիտարկելու նպատակով: Նախարարությունը, սակայն, նպատակահարմար չի համարել տվյալ պահին վերը նշված որոշումներում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ հանդես գալ, իսկ խնդրո առարկա հարցով դիմել է Կենտրոնական բանկ և Հայաստանի բանկերի միություն: Կենտրոնական բանկը 09.01.2024թ. N բարձրացրած խնդիրները ներկայացվել են ՀՀ գործող բանկերին՝ խնդիրների վերացման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու առաջարկությամբ:
	Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի «Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը վարելու կարգը հաստատելու մասին» N 1081-Ն որոշման Հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետի	Ընթացքում է	ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1081-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին հանձնարարված է մինչև 2013 թվականի հուլիսի 1-ը միջոցներ ձեռնարկել՝ պարտադիր սոցիալական

հ/հ	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
	ա) և բ) պարբերությունների պահանջների հետ:		ապահովագրության վճարների մասին տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառելու և այդ ժամանակահատվածում վարձու աշխատողի համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ կատարած լինելու մասին տեղեկատվությունն ինքնաշխատ եղանակով ճշտելն ապահովող ծրագրային ապահովում ստեղծելու համար: Մինչև օրս Ծառայությունում նշված գործառույթն իրականացվել է մասնակի ինքնաշխատ ձևով: Որոշմամբ սահմանված ժամկետում ծրագրային գործիքը չի ներդրվել, իսկ տվյալ պահին այն ժամանակավրեպ է, քանի որ սահմանված ժամկետից անցել է ավելի, քան 10 տարի, իսկ նման ինքնաշխատ ծրագրային ապահովման անհրաժեշտությունն այլևս բացակայում է, քանի որ Ծառայության կողմից որոշակի՝ բավարար, չափով ապահովված է անհրաժեշտ տեղեկատվության ստացումը: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի առաջարկությունը՝ Ծառայությունը հարցը կանոնակարգելու նպատակով Նախարարությանը՝ սահմանված կարգով շրջանառելու նպատակով ներկայացրել է ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի ի N 1081-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Նախարարությունը 2024 թվականի հունիսի ի ԴԽ/ԱԳ-1-3/18876-2024 գրությամբ տեղեկացրել է, որ Ծառայության կողմից ներկայացված նախագծերով նախատեսվող կարգավորումները կքննարկվեն առաջիկայում նախարարության կողմից նախաձեռնվելիք օրենսդրական նախաձեռնությունների շրջանակներում:
	Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի կազմակերպություններում հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռնող համակարգչային ծրագրերի՝ հանրային հատվածի հաշվապահական	Ընթացքում է	Ծառայության կողմից կենսաթոշակների և նպաստների մասով ֆինանսավորումը կատարվում է ոչ թե անհատական՝ ըստ շահառուների, այլ՝ վճարող կազմակերպություններին՝ բանկերին և փոստին՝ համապատասխան վճարման ցուցակի հիման վրա հաշվարկված

h/h	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
	հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանության որոշման կարգը և դրանց ավտոմատացված համակարգերի նկատմամբ պահանջները սահմանելու մասին» թիվ կետի 2-րդ ենթակետի, 4-րդ կետի 2-րդ ենթակետի և 5-րդ կետերի պահանջների հետ:		հանրագումարին համապատասխան (մեկ թվով): Սակայն, հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի դիտարկումները, առաջիկայում Ծառայության կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ շահառուներին վճարվող կենսաթոշակների և նպաստների մասով ևս անհատական (ըստ շահառուների) հաշվառում վարելու և համապատասխան ծրագրային ապահովում ներդնելու (կա՛մ «ՀԾ-Ձեռնարկություն» ավտոմատացված հաշվապահական հաշվառման համակարգի լրացուցիչ գործիքակազմի, կամ էլ՝ նոր ծրագրային ապահովման միջոցով) հնարավորության հարցը պարզելու նպատակով:
	ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N1081-Ն «Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը վարելու կարգը հաստատելու մասին» որոշման 1-ին կետով հաստատվել է պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը վարելու կարգը: Համաձայն նույն որոշման Հավելվածի. • 10-րդ կետի՝ կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը դիմումի, վարչական ակտի հիման վրա և ինքնաշխատ եղանակով շտեմարանում ներառելու ընթացակարգը պետք է սահմաներ Ծառայությունը: Սակայն առ ընթացիկ եզրակացությունը կազմելու օրը Ծառայության կողմից նշված ընթացակարգը չի սահմանվել: • 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետի դիմումի հիման վրա կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը շտեմարանում ներառվելու դեպքում տեղեկատվությունը համադրվում է ծառայության տնօրինության տակ գտնվող տվյալների հետ: Ընդ որում, անճշտությունների (անհամապատասխանությունների) առկայության դեպքում՝ 1) հիմք է ընդունվում (շտեմարան է մուտքագրվում) դիմումի և կից	Ընթացքում է	Ծառայության կողմից խնդրո առարկա ընթացակարգը չի ընդունվել, քանի որ ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի ի N 1081-Ն որոշումն ինքնին արդեն իսկ ընթացակարգ է, քանի որ դրանով կարգավորված են պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը վարելու հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ կենսաթոշակի էլեկտրոնային գործ կազմելու, կենսաթոշակ նշանակելուց հետո ստացված՝ կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը շտեմարանում ներառելու, շտեմարանում ներառված՝ կենսաթոշակառուներին վերաբերող տվյալների հիման վրա կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու կամ վերականգնելու, կենսաթոշակ վճարելը դադարեցնելու կամ վերսկսելու ընթացակարգերը: Բացի այդ, պետք է նշել նաև ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N հաջորդական կարգով սահմանված են կենսաթոշակ նշանակելու տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելը դադարեցնելու և վերսկսելու դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերն ու տվյալները պետական կենսաթոշակային համակարգի

h/h	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
	փաստաթղթերի հիման վրա ներկայացված տեղեկատվությունը. 2) ծառայությունը, տեղեկատվության հավաստիության համար պատասխանատու պետական կառավարման մարմնի հետ համատեղ, փոխհամաձայնեցված կարգով, միջոցներ է ձեռնարկում անճշտությունները (անհամապատասխանությունները) շտկելու ուղղությամբ: Պատասխանատու պետական կառավարման մարմինների հետ փոխհամաձանեցված կարգեր առկա չեն:		տվյալների շտեմարանում գրանցելու կանոնները (ընթացակարգը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա ընթացակարգն արդեն իսկ կարգավորված է ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1081-Ն և 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշումների շրջանակներում, ուստի Ծառայության կողմից ներքին իրավական ակտով առանձին ընթացակարգ չի սահմանվել և տվյալ պահին բացակայում է այն սահմանելու անհրաժեշտությունը: ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1081-Ն որոշման 12-րդ կետի 2-րդ ենթակետում նշված է, որ դիմումի հիման վրա կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը շտեմարանում ներառվելու դեպքում տեղեկատվությունը համադրվում է ծառայության տնօրինության տակ գտնվող (ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կառավարման և այլ մարմիններից ինքնաշխատ եղանակով ստացված) տվյալների հետ: Ընդ որում, անճշտությունների անհամապատասխանությունների) առկայության դեպքում՝ Ծառայությունը, տեղեկատվության հավաստիության համար պատասխանատու պետական կառավարման մարմնի հետ համատեղ, փոխհամաձայնեցված կարգով, միջոցներ է ձեռնարկում անճշտությունները անհամապատասխանությունները) շտկելու ուղղությամբ: Ծառայությունը սույն կետում նշված հարցերը կանոնակարգելու նպատակով սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնին՝ Նախարարությանը՝ սահմանված կարգով շրջանառելու նպատակով ներկայացրել է ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1081-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Ն ա խ ա ր

h/h	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
			նախաձեռնվելիք օրենսդրական նախաձեռնությունների շրջանակներում:
	Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի «Լիազորված պետական մարմին ճանաչելու, սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևը, սոցիալական ապահովության հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալների ցանկը և սոցիալական ապահովության հաշվին մուտքագրելու միջոցով վճարվող գումարները սահմանելու մասին» թիվ Ն որոշմամբ սահմանված «Սոցիալական ապահովության հաշվի» պայմանագրի» հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետի՝ լիազոր մարմնի՝ սույն պայմանագրի N 3 ձևով սահմանված տեղեկատվությունը պարունակող կարգադրության պահանջի) հիման վրա, այն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ, դրանում նշված գումարի չափով, առանց շահառուի համաձայնության, նրա բանկային հաշվից հետ գանձել միջոցները բավարար միջոցներ չլինելու դեպքում՝ բանկային հաշվում առկա հասանելի մնացորդի չափով) և ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ միաժամանակ ապահովելով սույն պայմանագրի N 4 ձևով սահմանված տեղեկատվությունը լիազոր մարմին ներկայացնելը: Բանկը պատասխանատվություն չի կրում բանկային հաշիվ մուտքագրված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված այն գումարների համար, որոնք հաճախորդի (շահառուի) կարգադրության հիման վրա բանկային հաշվից դուրս են գրվել (ելքագրվել են)՝ մինչև լիազոր մարմնից սույն ենթակետում նշված կարգադրությունը պահանջը) ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը. Ծառայությունը չունի որևէ գործիքակազմ բանկի պատասխանատվության	Ընթացքում է	Խնդրո առարկա հարցը վերաբերում է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի Ն որոշման հավելվածով հաստատված սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված բանկի պարտականությանը, որի վերաբերյալ ըստ Եզրակացությամբ արձանագրվածի՝ Ծառայությունը չունի որևէ գործիքակազմ բանկի պատասխանատվության ժամանակահատվածում՝ լիազոր մարմնից նշված կարգադրությունը (պահանջը) ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում և դրանից հետո հաճախորդի (շահառուի) կարգադրության հիման վրա բանկային հաշվից գումարների դուրս գրվելը հսկելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկերի հետ կնքվող սոցիալական ապահովության հաշվի (պարբերական դրամական վճարների մասին) պայմանագրի օրինակելի ձևը հաստատված է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի Ն որոշմամբ, ուստի խնդրո առարկա հարց է դառնում Հաշվեքննիչ պալատի նշված դիտարկման և առաջարկության հաշվառմամբ սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտության և/կամ նպատակահարմարության հարցը, որը գտնվում է սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնի իրավասությունների տիրույթում: Ուստի Ծառայությունը դիմել է Նախարարությանը՝ Հաշվեքննիչ պալատի նշված դիտարկման և Եզրակացության 8-րդ բաժնի («Առաջարկություններ») 2-րդ և 4-րդ կետերով ներկայացված առաջարկությունների վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով: Նախարարության կողմից ստացված դիրքորոշման հիման վրա Ծառայության կողմից, անհրաժեշտության դեպքում, կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ:

հ/հ	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
	ժամանակահատվածում՝ լիազոր մարմնից սույն ենթակետում նշված կարգադրությունը (պահանջը) ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում և դրանից հետո հաճախորդի (շահառուի) կարգադրության հիման վրա բանկային հաշվից գումարների դուրսգրվելը հսկելու համար:		

VIII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությանը.

Հաշվի առնելով նախորդ՝ 2023 թվականի պետական բյուջեի տարեկան, ինչպես նաև 2024 թվականի պետական բյուջեի երեք և վեց ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննություններով արձանագրված խնդիրների մի մասի լուծված չլինելու հանգամանքը, ձեռնարկել միջոցներ՝ այդ հաշվեքննություններով ներկայացված առաջարկությունների իրագործման նպատակով: Մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը:

Հաշվեքննիչ
պալատի անդամ

Digitally signed by
MIHRANYAN HAKOB 1108660142
Date: 2025-02-04 14:10:14

Հ.ՄԻՀՐԱՆՅԱՆ